ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

31 ՄԱՅԻՍԻ, 2017 թ.

№ 9 (1009)

Թերթի առաջին համարը լույս է տեսել 1965 թ. մարտի 11-ին
երկշաբաթաթերթ ● հրատարակման 52 -րդ տարի

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

ՄԱՅԻՍԻ 28. ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԸ



ՕՐՀԱՍԻ ՊԱՀԻՆ՝ ՄԻԱԿԱՄ ՈՒ ՄԻԱՁՈՒՅԼ...

...Երևանին մոտիկ մի դաշտ կա, ուր թվում էր 1918-ին ամեն ինչ պիտի վերջանար... Վերջանար 1918 թ. մայիսին...

Պիտի վերջանար աշխարհի ամենահին, ամենաառեղծվածային, իր հակասություններով հանդերձ, ամենաազնիվ ժողովուրդներից մեկը: Ազնիվ, որովհետև դարեդար ոչ միայն սեփական քրտինքով, այլև տառապանքով ու արյամբ էր մաքրվել:

Այստեղ պիտի վերջանար մի լեզու, որ դարձյալ աշխարհում ամենահներից էր և իր ժողովրդի հետ մի այնպիսի տառապալի, համառ ու հավատավոր ճանապարհ էր անցել, որ այդ տառապանքի հարստությամբ անհունորեն հարստացել էր, այդ համառության ոգին ժառանգած, դարձել էր ջղուտ և այդ հավատի ամրությունն առած, այնպես էր կարծրացել ու բյուրեղացել, որ գրավոր դառնալուց դեռ շատ առաջ, իր սքանչելի ➤2

ՑՈՒՑԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՊՈԴԻՈՒՄՈՒՄ

ՀՊՄՀ Գեղարվեստական կրթության ֆակուլտետի հագուստի մոդելավորում բաժնի ուսանողների ավարտական կուրսերի աշխատանքներն այս տարի ներկայացվեց նոր ձևաչափով՝ հանդիսավոր ցուցադրությամբ:

Դիզայնի և դեկորատիվ-կիրառական արվեստի ամբիոնի դասախոսներ Արամ Նիկոլյանի և Լիլիթ Մելիքյանի նախաձեռնությամբ ուսանողները հնարավորություն ստացան 4 տարվա ընթացքում ստեղծած իրենց հագուստները ներկայացնել հանրությանը: Ուսանողներից յուրաքանչյուրը տարբեր թեմատիկայով ներկայացրել էր 3-4 աշխատանք, իսկ որպես մոդելներ հանդես եկան Կուլտուրայի ֆակուլտետի պարարվեստի մանկավարժության ամբիոնի ուսանողները:

➤2

ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ ԵՆՔ

Հանրապետության տոնի առթիվ Նախագահի նստավայրում տեղի է ունեցել պետական պարգևների և կոչումների շնորհման արարողությունը: Աշխատանքային վաստակի, անմնացորդ նվիրումի, Հայրենիք-Սփյուռք կապերի խորացման և ընդլայնման գործում ունեցած նշանակալի ավանդի համար ՀՀ Նախագահը տարբեր ոլորտների մի խումբ անձանց պարգևատրել է պետական բարձրագույն պարգևներով, շնորհել նաև պատվավոր կոչումներ:

Մանկավարժական համալսարանի Կուլտուրայի ֆակուլտետի ռեժիսուրայի ամբիոնի վարիչ, Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնի գեղարվեստական ղեկավար, պրոֆեսոր Արմեն Էլբակյանը թատերական արվեստի բնագավառում ունեցած վաստակի համար արժանացել է Հայաստանի Հանրապետության ժողովրդական արտիստի կոչման:

«Հաճելի է, երբ արածդ գործը գնահատվում է. յուրաքանչյուր մարդ այս աշխարհում կարիք ունի սիրո, փաղաքշանքի, գնահատման»,- ասել է Արմեն Էլբակյանը՝ կարևորելով գործը, նպատակը և դրանք հանդիսատեսին փոխանցելու բարոյականությունը:

«ՎԱՀԱՆ ԹԵՔԵՅԱՆ» ՄՐՑԱՆԱԿԱԿԻՐՆԵՐԸ ՀԱՅՏՆԻ ԵՆ

«Թեքեյան» կենտրոնում մայիսի 23-ին անցկացվեց Հայաստանի «Թեքեյան մշակութային միության» «Վահան Թեքեյան» ամենամյա միջազգային մրցանակաբաշխությունը, որն իրականացվում է Ամերիկայի և Կանադայի «Թեքեյան մշակութային միության» «Շաքե Ղազարյան» հիմնադրամի հովանավորությամբ:

«Հայաստանի Թեքեյան մշակութային միություն» գործունեությունը և մասնավորապես ավանդական դարձած ամենամյա մրցանակաբաշխությունը ուրույն տեղ ունեն Հայաստանի մշակութային կյանքում: Ավելի քան երկու տասնամյակ ԹՄՄ-ն խրախուսում է հայ արվեստագետներին, խթանում լավագույն ստեղծագործությունները՝ դրանք ➤2

Թանգարանների միջազգային օրը

«Ցավոտ պատմություններ. դժվար պատմելին թանգարաններում»

Թանգարանների միջազգային օրվան նվիրված միջոցառումներին այս տարի Մանկավարժական համալսարանի թանգարանը միացավ արդեն հինգերորդ անգամ: Օրվա խորագիրն էր՝ «Ցավոտ պատմություններ. դժվար պատմելին թանգարաններում»: 95-ամյա բուհի պատմությունը հագեցած է հետաքրքրաշարժ, ուրախ, տխուր պատմություններով և անցյալի հուշերով, որոնք թերթելիս կանգ առանք ստալինյան բռնատիրության և արցախյան ազատամարտի տարիները ներկայացնող պատմությունների, հիշողությունների ու վավերագրերի վրա:

«Պատմում են բռնագաղթվածների հարազատները» թեմայի շրջանակներում թանգարանը հյուրընկալել էր 1930-ական թվականներին ստալինյան բռնաճնշումների զոհ դարձած Մանկավարժա- ➤2

«ՎԱՀԱՆ ԹԵՔԵՅԱՆ» ՄՐՑԱՆԱԿԱԿԻՐՆԵՐԸ ՀԱՅՏՆԻ ԵՆ

➢1 ճանաչելի դարձնելով հանրությանը: Մրցանակաբաշխությանը մասնակցում էին հանրապետության մի շարք պաշտոնատար անձինք: Ելույթ ունեցան սփյուռքահայ մտավորական, գրականության հանձնախմբի նախագահ Երվանդ Ազատյանը, ՀՊՄՀ ռեկտոր, ԹՄՄ նախագահ, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ Ռուբեն Միրզախանյանը, ՀՀ փոխվարչապետ Վահե Գաբրիելյանը և ուրիշներ:

«Մեծանուն բանաստեղծի պատգամները հետևողականորեն իրականացնում է «Թեքեյան մշակութային միությունը», որի վառ վկայությունը ներկա մրցանակաբաշխությունն է»,-ասաց փոխվարչապետը, ով կարևորեց միության մեծ դերակատարությունը հայ մշակութային իրականության մեջ և շնորհավորեց մրցանակակիրներին:

Անվանակարգերում հաղթողների անունները հրապարակեց Ռուբեն Միրզախանյանը՝ անդրադառնալով հաղթողներին ու նրանց ստեղծագործություններին:

Մրցանակները հանձնվեցին 4 անվանակարգերում՝ գրականության, թատրոնի, երաժշտության և կերպարվեստի բնագավառներում:

2016 թվականի մրցույթի «Գրականություն» անվանակարգում հաղթեց Եղիշե Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի «Պատասխան 100 տարի անց» գեղարվեստական վավերագիրքը: Թեքեյան մշակութային միության ԱՄՆ-ի և Կանադայի մասնաճյուղի ղեկավար, գրականության հանձնախմբի նախագահ Ե. Ազատյանն ասաց, որ գրքում զետեղվել են Կոմիտասի վերջին նամակը, Ցեղասպանության զոհը դարձած մարդկանց խոհերն ու վերջին նամակները, որոնք մնացին անպատասխան, և որոնց պատասխանելու է ներկա սերունդը:

«Գրականություն» անվանակարգում այս տարի մրցանակ հանձնվեց նաև գրականագետ Հենրիկ Բախչինյանին՝ «Գրիգոր Նարեկացու գանձարանը. վերծանություն և քննություն» աշխատության համար:

«Երաժշտություն» անվանակարգում լավագույնը ճանաչվեց Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի գեղարվեստական ղեկավար և տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Կոնստանտին Օրբելյանը՝ երաժշտական գործունեության համար:

«Թատերական արվեստ» անվանակարգում մրցանակը շնորհվեց «Անկոչ Աննա» ներկայացման բեմադրիչ, Հր. Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնի դերասան, ռեժիսոր Գրիգոր Խաչատրյանին:

«Կերպարվեստ» անվանակարգում հաղթեց նկարիչ Միքայել Հարությունյանը՝ «Հայաստան» կտավի համար: Ի դեպ, 18-ամյա Միքայելը մրցանակաբաշխության պատմության մեջ ամենաերիտասարդ մրցանակակիրն է:

Հավակնորդների աշխատանքները գնահատել են մասնագիտական հանձնախմբերը, իսկ մրցանակները դափնեկիրներին հանձնեցին Երվանդ Ազատյանը, ՀՊՄՀ պրոֆեսոր Արմեն Էլբակյանը, ՀՀ գիտության վաստակավոր գործիչ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Հրավարդ Հակոբյանը:

Երեկոն զարդարում էր Հայաստանի հեռուստատեսության և ռադիոյի սիմֆոնիկ նվագախմբի փոքր կազմը՝ ՀՀ ժողովրդական արտիստ, մաեստրո Երվանդ Երզնկյանի գլխավորությամբ, իսկ մրցանակաբաշխությունը, ինչպես միշտ, բացվեց Առնո Բաբաջանյանի «Իմ սիրտը լեռներում է» ստեղծագործությամբ:

Միլվա ԱՍՐՅԱՆ

ՕՐՀԱՍԻ ՊԱՀԻՆ...

➢1 գողթան երգերում, ադամանդի փայլ էր ստացել...

Այստեղ պիտի վերջանար մի քաղաքակրթություն, որ դարձյալ աշխարհում ամենահներից էր:

Յաթաղանի բիրտ հարվածը պիտի կտրեր այդ հնագույն քաղաքակրթություններից մեկի արմատը: Իսկ այնուհետև հայոց լեզուն պիտի համարվեր մեռյալ, գիտական գրադարանների դարակներում պիտի փոշոտվեին մեր չքնաղ առասպելները, Նարեկացու աստվածային զրույցը՝ համաշխարհային պոեզիայի այդ բարձրագույն թռիչքներից մեկը, քուչակյան հանճարեղ հայրենները պիտի ընթերցող չունեցող մատյանների էջերում ինքնանպատակ բոցկլտային, իսկ Թումանյանի բանաստեղծական հրաշքը պիտի արժանանար այն տխուր փառքին, որին արժանացել են անհետացած ժողովուրդների հանճարները...

Իսկ մեր պատմական հուշարձանները կամ պիտի ավերվեին նվաճողների կողմից, ինչպես արվում է Արևմտյան Հայաստանում, կամ վերածվեին ոչխարի փարախների և կամ պիտի սեփականացվեին, մի բան, որ կեղծարարությամբ ու զեղծարարությամբ արվում է նաև այսօր:

Բայց այստեղ ամեն ինչ սկսվեց նորից...

Եվ սկսվեց մի այնպիսի ժամանակ, երբ մարդկային ամենահասարակ տրամաբանությունն իսկ ասում էր, թե այլևս ոչինչ չի կարող սկսվել, քանի որ բառացիորեն մեն-մենակ էինք արար աշխարհում, մենակ, անպաշտպան, ծվատված ու արյունաքամ...

Եվ դա լավ գիտեին թուրք բարբարոսները: Նրանք հաշվել էին, կշռել ու տեսել, որ ամեն ինչ իրենց օգտին է՝ ժամանակը, իրադրությունը, դիվանագիտությունը, ուժը:

Եվ միայն մի բան հաշվի չէին առել՝ հայ ժողովրդի գաղտնիքը, առեղծվածը, ոգին, այդ ոգու յուրահատկությունը:

...Նրանք հույսը դրել էին նաև մեր ժողովրդի բնավորությանը ոչ առանց հիմքի վերագրված անմիաբանության վրա: Եվ այստեղ էլ էին սխալվել:

Նրանք չէին սերտել մեր պատմությունը, չգիտեին նաև, որ այդ անմիաբան համարվող ժողովուրդը օրհասի պահին այնպես է միական ու միաձույլ, որ սեղմվում ու բռունցք է դառնում:

Վահագն ԴԱՎԹՅԱՆ
«ՀԱՄԱՌՈՏ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՑ»

«Ցավոտ պատմություններ. դժվար պատմելին թանգարաններում»

➢1 կան համալսարանի դասախոսների հարազատներին, որոնցից շատերին բախտ չի վիճակվել տեսնել նրանց, բայց նրանց մասին անընդհատ պատմությունների շնորհիվ մշտապես զգացել են նրանց ներկայությունը: Եվ այս հանգամանքն օգնեց, որ նրանք կարողանան ներկաներին փոխանցել իրենց լսած պատմությունները, հույզերն ու ապրումները ճակատագրի բերումով ու ժամանակի պահանջով «անծանոթ» դարձած հարազատների մասին: Ցավոք, բուհում դասավանդած և բռնաճնշումների զոհ դարձած ոչ բոլոր մտավորականներն են հասցրել ընտանիք կազմել, սակայն մեր հյուրերը՝ մաթեմատիկոս, Մանկավարժական ինստիտուտի բարձրագույն մաթեմատիկայի ամբիոնի հիմնադիր Արշակ Տոնյանի թոռնուհին՝ Ելենա Հովհաննիսյանը, զարմիկը՝ Յուրիկ Հովհաննիսյանը և Տոնյանների ընտանիքի բարեկամ, ԵՊՀ դասախոս Սահակ Սահակյանը հուշեր պատմեցին ոչ միայն իրենց պապի, այլև նրա գրչակից և բախտակից ընկերների մասին՝ հուշերը համեմելով նաև նրանց կյանքից զավեշտալի ու հետաքրքրաշարժ դրվագներով:

Միջոցառման երկրորդ հատվածում, ՀՊՄՀ Գեղարվեստական կրթության ֆակուլտետի դասախոս, ազատամարտիկ, «Նորք» ջոկատի հրամանատար Աղվան Մխիթարյանը ներկաներին փոխանցեց իր հուշերն ու հույզերը արցախյան ազատամարտի տարիներից, իսկ բուհի շրջանավարտ, ազատամարտիկ, «Մեծն Մուրադ» ջոկատի փոխհրամանատար Գևորգ Անդրիկյանի որդին՝ Արմանը, ներկայացրեց ազատամարտիկ հոր անցած մարտական ուղին:

Միջոցառման շրջանակներում կազմակերպված «Ազատամարտիկի հիշատակարանը» խորագիրը կրող ժամանակավոր ցուցադրության շրջանակներում ներկայացված են արցախյան ազատամարտի մասնակից մեր բուհի դասախոսների և շրջանավարտների անձնական իրեր, լուսանկարներ և մարտական վկայականներ, իսկ մեր բուհի ուսանող Հայկ Մանուկյանի՝ ապրիլյան քառօրյա պատերազմի օրերի մասին պատմող ֆոտոշարքը ներկայացված էր «Սահմանին» խորագրով՝ վիրտուալ ցուցադրության տարբերակով:

Միջոցառման ներկաները կենդանի լեգենդների հետ շփվելու և նրանց ունկնդրելու հնարավորություն ունեցան՝ մեկ անգամ ևս ծանոթանալով, բացահայտելով և վերարժևորելով մեր պատմության, թեկուզ ցավոտ, բայց միևնույն ժամանակ հերոսական անցյալը:

Թանգարանների միջազգային օրվան նվիրված միջոցառման ընթացքում ՀՀ ԳԱԱ երկրաբանական թանգարանի տնօրեն Գայանե Գրիգորյանը «Զրի համաշխարհային օրը մշակույթների խաչմերուկում» խորագրով միջոցառմանը մասնակցելու համար, ի նշան երախտագիտության, համալսարանին հանձնեց ջուրը խորհրդանշող հուշանվեր-մրցանակ, իսկ այդ միջոցառմանը մասնակցած մեր բուհի ուսանողներն ու դասախոսներն արժանացան պատվոգրերի:

Մարիաննա ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ
Թանգարանի
ավագ գիտաշխատող

Թանգարանների միջազգային օրվա շրջանակներում ՀՀ մշակույթի նախարար Արմեն Ամիրյանի հրամանով նախարարության Ոսկե մեդալների են արժանացել ոլորտի մի շարք ներկայացուցիչներ, այդ թվում նաև Մանկավարժական համալսարանի թանգարանի տնօրեն Ալվարդ Գրիգորյանը:

ՀՀ մշակույթի նախարարության պատվոգրի է արժանացել նաև Բուդապեշտի Պիտեր Պազմանի անվան կաթոլիկ համալսարանի հայագիտության ամբիոնի վարիչ Բալինտ Կովաչը:

Հունգարիայի վերոհիշյալ համալսարանի հայագիտական ամբիոնը բացվել է երկու բուհերի համագործակցության շրջանակում:

ՓԱՆՈՍ ԹԵՐԼԵՄԵԶՅԱՆ. ԿՅԱՆՔԻՍ ՀՈՒՇԵՐԸ

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի «Սփյուռք» գիտաուսումնական կենտրոնում անցկացվեց «Փանոս Թերլեմեզյան. կյանքիս հուշերը» գրքի շնորհանդեսը Մանկավարժական համալսարանի, «Սփյուռք» կենտրոնի և «Ազգ» թերթի համատեղ նախաձեռնությամբ: Գրքի բնագիրը հրատարակության է պատրաստել, առաջաբանը և ծանոթագրությունները գրել Երվանդ Տեր-Խաչատուրյանը:

Ներածական խոսքով հանդես եկավ բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, հայ նոր և նորագույն գրականության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Սուրեն Դանիելյանը: Պրոֆեսորը նկատեց՝ այսօր մեր մեծերը կամաց-կամաց աղոտանում են մեր հիշողություններում: Թվարկելով վանեցի Փանոս Թերլեմեզյանի դերը ազգային-ազատագրական շարժման, Վանի հերոսամարտի կազմակերպման մեջ և այլ կարևոր իրադարձություններում՝ բանախոսը փաստեց. «Նա «վայելել է» ցարական հալածանքների «քաղցրությունը»՝ միշտ մնալով առինքնող»:

«Գրքից ամեն մեկը կարող է իր պատառիկը որսալ, բայց գրամշակութային դաշտում այն մնայուն ու անուրանալի դաս է»՝ ամփոփեց Ս. Դանիելյանը:

Այնուհետև Փ. Թերլեմեզյանի կյանքի, ստեղծագործությունների և գրքի շուրջ խոսեցին Ռամկավար ազատական կուսակցության գործիչ, դոկտոր Երվանդ Ազատյանը, Բանասիրական ֆակուլտետի դեկան Աշոտ Գալստյանը, «Ազգ» թերթի գլխավոր խմբագիր Հակոբ Ավետիքյանը և գրքի կազմող Երվանդ Տեր-Խաչատուրյանը:

«Նկարիչը իր հուշերը գրել է 1939-1941 թվականներին, մեր երկրի ու մեր ժողովրդի համար շատ ծանր ժամանակներում: Պատկերացրեք, 1937 թվականից հազիվ մեկ-երկու տարի անց մարդը գրիչ է առնում գրելու իր կորսված հայրենիքի, առհասարակ Արևմտյան Հայաստանի ու մեր ժողովրդի կյանքի ճակատագրական ժամանակների ու ճակատագրական իրադարձությունների մասին: Դրա համար առաջին հերթին անհրաժեշտ էր ունենալ բարոյական բարձր նկարագիր և հոգեկան մեծ արիություն»,-ասված է գրքի առաջաբանում:

Վանի հերոսական ինքնապաշտպանությունը մշտապես եղել է մեր գրականության ուշադրության առանցքում, բայց Փ. Թերլեմեզյանի գրչի ներքո այն բացառիկ արժեք ունի, մանավանդ, որ վերջինը ինքնապաշտպանության կազմակերպիչներից ու կարևոր դեմքերից մեկն է:

Ավելի քան 75 տարի Փ. Թերլեմեզյանի հուշերը մնացել են անտիպ: Գրքի հրատարակմամբ այդ հուշերը «ընծայվում են ընթերցողին»: Գիրքը մեր հայրենագիտական և հուշագրական գրականության լավագույն էջերից է:

Միլվա ԱՍՐՅԱՆ

Նրանք սիրեցին Հայաստանը, նրա պատմությունն ու մշակույթը

Ուսանողների փոխանակման էրազմուս պլյուս ծրագրի և 2016 թվականին ՀՊՄՀ-ի կողմից և Հունգարիայի Պիտեր Պազմանի կաթոլիկ համալսարանում հայագիտության ամբիոնի բացման պայմանագրի շրջանակներում Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Պատմության և իրավագիտության ֆակուլտետի հայոց պատմության ամբիոնում մեկ կիսամյակ ուսանում են Հունգարիայի Պիտեր Պազմանի համալսարանի ուսանողներ Նոռա Տելեքը, Զոլտան Գառեյը, Աննա Ֆոլդեշին, Բալաժ Յանչիկը և Դանիել Լոնգերը: Մագիստրոսական կրթական ծրագրով նրանք ուսումնասիրում են հայոց պատմությունն ու մշակույթը, հայագիտությունն ու հնագիտությունը:

Նոռա Տելեքը և Զոլտան Գառեյը կաթոլիկ համալսարանի հայագիտության ամբիոնի ուսանողներ են, ապագա պատմաբաններ, Աննա Ֆոլդեշին, Բալաժ Յանչիկը և Դանիել Լոնգերը հնագետի մասնագիտություն են ստանում:

Զոլտան Գառեյը ծնվել է Դեբրեցան քաղաքում և ապրել տարբեր քաղաքնե-

ռում: Նա 23 տարեկան է: Նոռան 22 տարեկան է, նա Բուդապեշտից է:

Ապագա պատմաբանները որոշել են գալ և տեղում ուսումնասիրել հայոց պատմությունն ու մշակույթը: Որոշմանը նպաստել է նաև Հունգարիայի վերոհիշյալ համալսարանում բացված հայագիտության ամբիոնը:

Ուսանողներին Մանկավարժական համալսարանում դասավանդում են անգլերենով: Նրանք հայերեն որոշ բառեր ու արտահայտություններ են սովորել, բայց դժվարանում են խոսել. կարծում են թե՛ հայերենին, թե՛ հունգարերենին տիրապետելը դժվար է: Սիրում են Հայաստանը, եղել են բազմաթիվ պատմամշակութային վայրերում, նաև այցելել են Արցախ: Հունգարացի ուսանողները համտեսել են հայկական ուտեստները, կերել Արցախի ժենգյալով հացը, ընկերներ ունեն Գորիսում և հայ ընկերների հետ հաճախ են պատրաստում հայկական ազգային ուտեստներ:

Շուտով նրանք ավարտում են իրենց դասընթացները, բայց Զոլտանը մտադիր է հաստատվել Հայաստանում, որովհետև շատ է սիրել Հայաստանն ու հայերին: Նոռան կմեկնի Հունգարիա՝ մեկ անգամ ևս Հայաստան վերադառնալու հույսով:

Հունգարացի ուսանողներին դուր են գալիս հայ դասախոսները և ուսանողները, որովհետև նրանք բարյացակամ են, միշտ պատրաստ են օգնության ձեռք մեկնել:

Ինչով է գրավիչ Հունգարիան հարցադրմանն ի պատասխան Զոլտան Գառեյը ասում է, որ իր երկիրը հազարավոր ամրոցներ ունի, որոնք պատմամշակութային արժեքներ են և տարեկան միլիոնավոր այցելուներ են բերում:

Մանկավարժական համալսարանում են սովորում նաև հունգարացի ուսանողներ Աննա Ֆոլդեշին, Բալաժ Յանչիկը և Դանիել Լոնգերը:

Աննա Ֆոլդեշին Բիչկայից է, Հայաստանում նա ուսումնասիրում է հնագիտություն, արվեստի պատմություն, ցեղասպանություն, ռուսաց լեզու և մասնագիտական դասընթացներ: Ապագա հնագետին հետաքրքրել է Հայաստանի հնագույն մշակութային ժառանգությունը, և նա որոշել է սովորել Հայաստանում: Աղջիկն արդեն հասցրել է մասնակցել պեղումների, եղել է Կարմիր բլուրում, Էրեբունի թանգարան-արգելավայրում և Շենգավիթում:

Նրա կարծիքով մեր հայաստանյան համալսարաններում ուսանողների առօրյան ավելի լավ ու հետաքրքիր է կազմակերպվում: Ինքն էլ այս կարճ ուսումնառության ընթացքում մասնակցում է բուհի ուսանողների կազմակերպած միջոցառումներին ու արշավներին: Նա կարևորում է այստեղ ուսանելու ընթացքում ցեղասպանությունն ուսումնասիրելու հնարավորությունը:

Բալաժ Յանչիկը 24 տարեկան է, նա Յասբերին քաղաքից է, որն իր համալսարանից շատ հեռու չէ՝ շուրջ 100 կմ: Հնագետի մասնագիտությունն իր մանկության երազանքն է, իր քաղաքի տարածքում կան տարբեր հնագիտական վայրեր, որտեղ կարող է զբաղվել պեղումներով: Ժամանակը սուղ է, բայց հասցրել է լինել Էջմիածնում, Զվարթնոցում, Արմավիրում: Չորս ամիս է, որ ուսումնառում է Մանկավարժականում, հունիսի կեսին ուսանողները պետք է վերադառնան իրենց երկիր, բայց Բալաժը հույս ունի, որ մի օր կվերադառնա Հայաստան:

Դանիել Լոնգերը Բուդերշից է: 22 տարեկան երիտասարդը Հունգարիայում արվեստի պատմություն էր ուսումնասիրում, երբ իմացավ Հայաստանի հնամյա մշակույթի մասին և որոշեց մոտիկից ծանոթանալ: Դանիելն ու Բալաժը հայերեն էլ են ուսումնասիրում, փորձում են ստանալ գոնե տարրական գիտելիքներ մեր լեզվի մասին:

Դանիելը Հայաստան գալուց առաջ միայն նկարներում էր տեսել հայկական խաչքարը, այժմ նա հիացած է հայկական անկրկնելի խաչքարերով: Սիրում է Հայաստանի սպասը, թեև Բալաժը և Աննան նախընտրում են խորովածն ու տոլման:

Դանիելը հիացմունքով է խոսում Մանկավարժականի դասախոսների մասին, ովքեր գիտական բարձր պատրաստվածություն ունեն և հոգատար են ուսանողների հանդեպ: Երկու երկրների կրթական համակարգերի ու ծրագրերի մասին խոսելիս նա նկատում է՝ այստեղ դասերն ավելի պրակտիկ են ու հետաքրքիր:

Շուտով հունգարացի ուսանողները կվերադառնան իրենց հայրենիք՝ նոր գիտելիքներով ու վառ տպավորություններով, տանելով իրենց հետ Հայաստանի արևի ջերմությունը, հայ դարավոր մշակույթի գեղեցկությունն ու հայկական համալսարանի բարյացակամ ու գրավիչ մթնոլորտը:

Միլվա ԱՍՐՅԱՆ

ԿԵԴՐՈՆԱԿԱՆԸ 130 ՏԱՐԵԿԱՆ Է

Մայիսի 23-ին Ստամբուլի «Քենթեր» թատրոնում տեղի ունեցավ Ազգային Կեդրոնական վարժարանի 130-ամյակին նվիրված «Հայ դպրոցը անցյալեն դեպի այսօր» խորագրով հանդիսությունը: Շուրջ հիսուն աշակերտներ դասապահ հիշեցնող հրաշալի բեմադրությամբ, ազգային երգ ու պարով, մեջընդմեջ ներկայացվող ու հայ դպրոցի պատմությունը վերակերտող ժապավենի ուղեկցությամբ ներկայացրին արևմտահայ դպրոցի ուրվագիծը:

Վարժարանի վերջին 37 տարիների տնօրեն Սիլվա Գույումճյանը իր խոսքում ընդգծեց.

«Հայ ժողովուրդը իր գոյութեան պայքարին զուգահեռ ստեղծած է դպրոցներ ու ըմբռնելով ժամանակի ոգին՝ զարկ տուած է դպրոցի գաղափարին: 20-րդ դարասկզբին Օսմանեան կայսրութեան մէջ կը գործէին մօտաւորապէս երկու հազար վարժարաններ: Ներկայիս միայն Իսթանպուլի մէջ գործող 16 վարժարաններով է որ այս հողերուն վրայ ապրող հայեր կը փորձեն նոր սերունդը կերտել ու զանոնք փրկել ուծացումէն»:

Ապա խոսքը փոխանցեց Հայաստանից հատուկ այս առիթով Պոլիս ժամանած Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի «Սփիւռք» գիտաուսումնական կենտրոնի մեթոդիստ, Հայ նոր և նորագույն գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի ասիստենտ Քնարիկ Աբրահամյանին:

Նա նախ ընթերցեց համալսարանի ռեկտոր, պրոֆեսոր Ռուբեն Միրզախանյանի շնորհավորագիրը, որտեղ մասնավորապես նշվում էր. «Միսաք Մեծարենց, Դանիել Վարուժան, Հրաչյա Աճառյան, Արշակ Չոպանյան, Երուխան, Հակոբ Սիրունի, Վահան Թեքեյան, Լևոն-Զավեն Սյուրմելյան և կեդրոնականցի շատ ու շատ մտավորական-արվեստագետների սոսկ թվարկումն արդեն վկայում է այն փառավոր ուղու մասին, որ անցել ու այսօր էլ շարունակում է անցնել կրթական հաստատությունը՝ վերջին երեքուկես տասնամյակներին արդեն շնորհիվ նրա վաստակաշատ ու հմուտ տնօրենի՝ Սիլվա Գույումճյանի անմնացորդ ու խոնարհ նվիրումի:

Հավաստիացնում ենք, որ իբրև կրթական գործի կազմակերպիչ, լավագույնս ենք գիտակցում այն մարտահրավերներն ու խոչընդոտները, որոնք ամեն օր ստիպված եք լինում հաղթահարել Ձեր աշխատանքում: Մի կողմից այսօր մենք պարտավոր ենք քայլ պահել աշխարհի հետ, մյուս կողմից՝ զորացնել հայկական արմատը, որը ամենից առաջ հնարավոր է լեզվի ու հայեցի դաստիարակության միջոցով»:

Եվս մեկ անգամ ընդգծելով Ձեր հաստատումը, թե «Կեդրոնականը հիմնված էր մտավորական և ուսուցիչ պատրաստելու նպատակով», մենք էլ մեր անունից ուզում ենք հաստատել, որ այդ առաքելության մեջ հայրենիքում մանկավարժական մայրդարբնոցը՝ մեր համալսարանը, Ձեր կողքին է: Մեր դռները բաց են կեդրոնականցիների առջև՝ ուսուցիչ թե աշակերտ»:

Կեդրոնական վարժարան այցելության ու միջոցառումից ստացած տպավորությունների մասին իր խոսքում Քնարիկ Աբրահամյանը նշեց, որ կենտրոնականցիները լավագույնս են պահում այն երազը, որ ունեցել են իրենց նախորդները: Նա ասաց, որ հուզված է, որովհետև զգում է պատասխանատվությունը, պահի լրջությունն ու պատմականությունը, որովհետեւ խոսում է կրթական մի հաստատության մասին, որի նստարանին երբեք չի նստել, բայց որի աշակերտն է եղել միջնորդությամբ ու շնորհիվ մշակութային ու մտավորական հզոր դեմքերի, որոնք կազմել են Կեդրոնականի շրջանակը: Կեդրոնական վարժարանը իր հանձնառությամբ ու դիմագծությամբ իսկապես հավատարիմ է մնում Ազգային բաղադրիչին: Ներկայիս հայ կրթության առջև երկու կարևոր թիրախներ կան՝ մարդակերտում ու հայակերտում, որոնցից առաջինը պատասխանատվությունն է աշխարհի առջեւ, իսկ երկրորդը՝ հայոց պատմության ու ինքնության հայտանիշն է. այս երկու գուգակշիռները լավագույնս են պահպանվում Կեդրոնական վարժարանում»:

Հանդիսությունից հետո տոնախմբությունը շարունակվեց Կեդրոնական սանուց միության սրահում բացված սիրո սեղանի շուրջ:

Ավարտին տնօրենուհի Սիլվա Գույումճյանը, հանդիսությանը մասնակից և աջակից հյուրերի կարգին, Համալսարանի «Սփիւռք» Գիտաուսումնական Կենտրոնին և Քնարիկ Աբրահամյանին հանձնեց շնորհակալագրեր:

«Սփիւռք» Գիտաուսումնական Կենտրոն

Մայիսի 15-ին Սկզբնական կրթության ֆակուլտետի տարրական մանկավարժություն և մեթոդիկա բաժնի երկրորդ կուրսի ուսանողներն ու մայրենի լեզվի դասախոսները հանդիպեցին Հայաստանի Աստվածաշնչային ընկերության ծրագրերի տնօրեն, Գևորգյան հոգևոր ճեմարանի դասախոս, նախկինում ծայրագույն վարդապետ, Անթիլիասի դպրեվանքի տեսուչ Արշավիր Գաբուճյանի հետ:

ԵՐԲ ՀԱՆԴԻՊՈՒՄ ԵՆ ...

Որքան շատ եմ մտածում, այնքան ավելի եմ համոզվում, որ չկա ավելի բարձր արվեստ, քան մարդկանց սիրելու արվեստը:

Վինսենթ վան Գոգ

Երբ հանդիպում են մարդը և ՄԱՐԴԸ...

Խոսքը մարդու խոհն ու հույզը արտահայտելու զարմանահրաշ միջոց է, որի մեջ կա և՛ գույն, և՛ ձայն, և՛ կուռ ճարտարապետություն, և՛ թռիչք, և՛ թրթիռ, և՛ լույս..., որոնք բխում են մարդուց և ուղղված են մարդուն:

Երբ ուսանողներիս համար սկսեցի նմուշներ կարդալ Արշավիր Գաբուճյանի բանաստեղծություններից, բոլոր լսարաններում արձագանքը նույնն էր: Ինձ համար զարմանալի չէր, որ երիտասարդ հոգիներին անպայման պիտի գրավեր զգացմունքի նրբությունն ու մտքի խորությունը, պատկերի քնքշությունն ու անզուգական գեղեցկությունը, բառաշխարհի թարմությունը, նոր բառեր ստեղծելու ամենաանսպասելի լուծումներն ու ճկունությունը... Ուրախալի էր, որ հիացական էր վերաբերմունքը ոչ միայն արևելահայերեն, այլև արևմտահայերեն բանաստեղծությունների, ավելին՝ արևմտահայերենի նկատմամբ. նկատում ու զգում էին լեզվական իրողությունների տարբերությունները, արևմտահայերենի լեզվամտածողության յուրահատկությունը, հիանում հեղինակային այնքան ինքնատիպ ոճով ու անկրկնելի բառ-պատկերներով, երաժշտականությամբ... Սակայն ինձ համար միանգամայն անսպասելի էր, որ այսօրվա այդ երիտասարդ հոգիները ոչ միայն պատրաստ էին, այլև ցանկություն ու կարիքն ունեին գրողի հետ խորհելու, մտորելու ՄԱՐԴՈՒ և ՄԱՐԴԱՇԽԱՐՀԻ մասին, տարածության և ժամանակի անսահմանության մասին, մարդկային հոգու անհունության և վեհության մասին... Բանաստեղծական «Երեք բան կա» և «Գոյութիւնն իմ» ժողովածուներին լրացնելու եկավ նոր տպագրված «Դուն և ես» խոհագրությունը՝ արդեն արձակ՝ «Դուն և ես», «Ծրարուած էջեր», «Ծրարուած ժամանակ» բաժիններով ... Քայլերդ գրքի «ծրարված էջերով» տանում են հեղինակի անցած ճանապարհներով, խոհերով, հուշերով, կյանքի կարևորագույն սկզբունքների, հավերժական ճշմարտությունների ու արժեքների շուրջ մտորումներով... ու հասցնում գլխավորին... Իսկ գլխավորը ՍԵՐՆ է ԴԵՊԻ ՄԱՐԴԸ, որը հեղինակի համար այլևս դարձել է գոյության ձև ու ճանապարհ՝ առաքելություն...

Եվ մարդը հանդիպեց ՄԱՐԴՈՒՆ...

Սակայն ոչինչ չի կարող փոխարինել մարդկային անմիջական հաղորդակցմանը, որի կարիքն արդեն հասունացել էր՝ դառնալով անհրաժեշտություն: Հանդիպումը կայացավ՝ անկեղծ ու անմիջական, այնքա՛ն սպասված, բայց միանգամայն անսպասելի...

Որովհետև հոգին հանդիպեց ՀՈԳՈՒՆ...

Կեսգիշերից հետո նամակ ստացա մի ուսանողուհուց. «Հանդիպման ազդեցությունը չի անցնում... Անընդհատ մտածում եմ, ու մտքերս չեն վերջանում... Ինձ հետ երբեք այսպիսի բան չի պատահել...»: Հետո գրեց երկրորդը, երրորդը...

Իմ շա՛տ սիրելի ուսանողներ, այդպիսի բան կարո՞ղ է պատահել մարդու հոգում...

«Գլուխգործոցն այնպես է ներգործում մարդու վրա, որ նա իր մեջ սկսում է զգալ այն ճշմարտության կանչը, որով տվյալ ստեղծագործությունն արարելիս առաջնորդվել է արվեստագետը: Երբ գեղարվեստական ստեղծագործության և այն ընկալող մարդու միջև կապ է հաստատվում, վերջինիս հոգին մաքրագործող ցնցում է ապրում: Երբ հանդիսատեսը հայտնվում է արվեստի հզոր ստեղծագործության լուսարձակող դաշտում, բացվում են նրա հոգու լավագույն կողմերը, որոնք ձգտում են ազատագրվելու: Այդպիսի պահերին կատարվում է սեփական անձի գիտակցում և որպես անհատականության՝ բացահայտում. և գալիս է անսահմանության և զգացմունքների անհատակ խորության զգացողություն»: Ահա այսպես կբացատրեր ձեզ կինոյի բանաստեղծ, հանճարեղ ռեժիսոր Անդրեյ Տարկովսկին:

Այդպես լինում է, երբ լույսը հանդիպում է ԼՈՒՅՍԻՆ, միտքը հանդիպում է ՄՏՔԻՆ, հոգին հանդիպում է ՀՈԳՈՒՆ... երբ ՍԻՐՈ ԼՈՒՅՍԸ մարդուց հասնում է մարդուն: «ՍԵՐ ԴԵՊԻ ՄԱՐԴԸ». սա է ՀՈԳՈՒ ԳԵՂԵՑԿՈՒԹՅԱՆ գաղտնիքը, ՀՈԳՈՒ ԳԵՂԵՑԿՈՒԹՅԱՆ, որն ըստ ռուս հանճարեղ գրող Ֆյոդոր Դոստոևսկու՝ «պիտի փրկի աշխարհը»...

Եվ ես անչափ ուրախ եմ ձեզ համար՝ այդ անկրկնելի զգացումի ապրումը ունենալու համար...

«Մի՞թե կյանքը մեզ հարուստ հոգի ունենալու համար չի տրված»,- իր եղբորը՝ Թեոյին, գրում էր մեկ ուրիշ հանճար՝ Վինսենթ վան Գոգը: Այո՛: Միայն թե այդպիսի ՀՈԳԻՆ պիտի ժանյակի նման հյուսել՝ հյուսել լույսից, գեղեցկությունից, բարությունից... ՍԻՐՈՒՑ... Եվ մենք, որ կոչված ենք մարդ, ավելին՝ ՈՒՍՈՒՑԻՉ կրթելու, պատասխանատու ենք մեր սաների «գեղեցիկ հոգիների» համար, իսկ նրանք՝ իրենց սաների «գեղեցիկ հոգիների» համար...

Պարզապես պետք է սովորենք «մարդուն սիրելու արվեստը»՝ սիրենք և այդ սերն անմնացորդ բաշխենք մարդկանց. դա նաև մե՛ր առաքելությունն է...

Լիլիթ Աշոտի ՏԵՐ-ԳՐԻԳՈՐՅԱՆ

Արշավիր Գաբուճյան

ԲԱՐԻ ԼՈՒՅՍ

Բարի աչքով ժպիտ ցողէ
Դուն անցորդին, որ լոյս հող է.
Մի՛ սպասեր դուն աչքացաւ՝
- Շաղիկն արդեօք լոյս մը դարձա՞ւ...
Բարի ձեռքով դուն սերմ ցանէ
Հոգիներուն, որ ակօս է.
Եւ մի՛ նայիր ձեռքիդ անբաւ՝
- Սերմդ արդեօք հունձք մը դարձա՞ւ...
Բարի իղձով երազ աստղէ
Գիշերներուն այն աղեղէ.
Մի՛ մտածեր դառն, ըղձացաւ.
- Երազն իրօք ճիշդը դարձա՞ւ...
Բարի խօսքով դուն յոյս վառէ
Լապտերներուն՝ մարդոց շարք է.
Մի տագնապիր դուն մտացաւ՝
- Քայլ մը արդեօք տեղ մը հասա՞ւ...
Բարի սրտով դուն սէր բաշխէ
Անոնց, որոնք դեռ չունին քեզ
Մի՛ ափսոսար դուն սրտացաւ՝
- Սէրդ արդեօք մէկուն հասա՞ւ:
Մի՛ մտածեր՝ ով ինչ դարձաւ,
Եւ կամ ինքը տեղ մը հասա՞ւ,
Բայց տագնապիր՝ ով ինչ եղաւ:

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՆՎԻՐՅԱԼ ԳԵՐԴԱՍՏԱՆԸ

Հայ ընտանիքներում շատ հաճախ ընդունված է շարունակել «ընտանեկան», մասնագիտությունը. և ստացվում է, որ մի գերդաստանում սերնդեսերունդ մանկավարժներ են դառնում, մյուսում՝ բժիշկներ, երրորդում՝ տնտեսագետներ… Եվ ընտանեկան մասնագիտությունը շարունակական ու սիրելի է դառնում ընտանիքի մյուս անդամների համար. կրթությունն ու դաստիարակությունը փոխանցվում են մեկից մյուսին՝ նրա հետ նաև մասնագիտության հանդեպ սիրո և հավատարմության դրսևորումները…

Այսպիսի մի օրինակ է Նադիրյանների գերդաստանը, ուր յուրաքանչյուր անդամ իր ուրույն տեղն ունի: Ընտանիքի մեծ հայրը՝ Վաղինակ Միքայելի Նադիրյանը, ավարտելով ԵՊՀ բանասիրական ֆակուլտետը, աշխատել է լուսժողկոմում՝ որպես դպրոցական բաժնի վարիչ: Նա դասավանդել է Կրուպսկայայի անվան միջնակարգ դպրոցում՝ նախ ուսուցիչ, հետո՝ տնօրեն, որի ընթացքում նույն դպրոցում է սովորել նաև մեծանուն բանաստեղծ Սիլվա Կապուտիկյանը: Վաղինակն իր ծննդավայրի՝ Վրաստանի Մառնեուլի շրջանի Շահումյան ավանի բնակչության խնդրանքով տեղափոխվել է և աշխատանքի անցել տեղի միջնակարգ դպրոցում որպես հայոց լեզվի և գրականության ուսուցիչ, այնուհետև երկար տարիներ աշխատել է որպես տնօրեն:

Մանկավարժական անբասիր ծառայության համար նա ստացել է վաստակավոր ուսուցչի պատվավոր կոչում, պարգևատրվել է մի շարք մեդալներով և Աշխատանքային Կրամիր դրոշի, «Պատվո նշան» և Լենինի շքանշաններով:

Ընտանիքի մեծ մայրը՝ Վարդուհի Սիմոնի Նադիրյանը, ավարտել է ԵՊՀ կենսաբանական ֆակուլտետը և երկար տարիներ աշխատել ծննդավայրի միջնակարգ դպրոցում, դասավանդելով կենսաբանական առարկաներ: Վարդուհու մանկավարժական աշխատանքը ևս գնահատվել է. նա պարգևատրվել է «Աշխատանքային գործունեության համար» մեդալով և «Պատվո նշան» շքանշանով: Այնուհետև աշխատել է Երևանի հմ. 102 միջնակարգ դպրոցում:

Ընտանիքի երկու դուստրերը՝ Ջեմմա և Ջուլիետա Վաղինակի Նադիրյանները, արծաթե մեդալով ավարտելով տեղի միջնակարգ դպրոցը, սովորել են ԵՊՀ բանասիրական և կենսաբանական ֆակուլտետներում: Այնուհետև համապատասխանաբար որպես մանկավարժներ աշխատել են Բակունցի անվան մանկավարժական ուսումնարանում և Երևանի ֆիզկուլտուրայի ուսումնարանում:

Ընտանիքի որդին՝ Միքայել Վաղինակի Նադիրյանը, ոսկե մեդալով ավարտելով միջնակարգ դպրոցը, սովորել է Երևանի պետական բժշկական ինստիտուտում, որից հետո երեք տարի աշխատելով բժշկի մասնագիտությամբ, ընդունվել է Մոսկվայի մանկավարժական ակադեմիայի տարիքային ֆիզիոլոգիայի ինստիտուտի ասպիրանտուրան, պաշտպանել թեկնածուական ատենախոսություն՝ ստանալով գիտական թեկնածուի աստիճան:

Միքայելը աշխատանքի է անցել Երևանի պետհամալսարանի կենսաբանական ֆակուլտետում որպես դասախոս, այնուհետև՝ դոցենտ: Երկար տարիներ եղել է ֆակուլտետի դեկանի տեղակալ, հինգ տարի՝ համալսարանի օտարերկրյա ուսանողների նախապատրաստական ֆակուլտետի դեկան:

2000 թվականին նա հրավիրվել է Երևանի պետական մանկավարժական համալսարան, սկզբում՝ որպես ուսումնական հարցերի, այնուհետև՝ գիտության և հետբուհական կրթության աշխատանքների գծով պրոռեկտոր, միաժամանակ դասավանդելով բուհի կենսաբանական ֆակուլտետի մարդու և կենդանիների ֆիզիոլոգիայի ամբիոնում: Երեք տարի հասարակական հիմունքներով ղեկավարել է ամբիոնը:

Մ.Վ.Նադիրյանը 80 գիտական հոդվածների և երեք գիտաուսումնական գրքերի հեղինակ է: Մանկավարժական գործունեության ընթացքում պարգևատրվել է «Մանկավարժական համալսարան», Խաչատուր Աբովյանի մեդալներով և ՀՀ ԿԳ նախարարության ոսկե մեդալով:

Ընտանիքի հարսը՝ Աստղիկ Վահանի Նադիրյանը, ավարտել է ԵՊՀ ռոմանագերմանական ֆակուլտետը և երկար տարիներ ֆրանսերեն լեզվի ուսուցչուհի է աշխատել Երևանի հմ. 155 միջնակարգ դպրոցում :

Ընտանիքի թոռներից Նունե Միքայելի Նադիրյանը, ավարտելով ԵՊՀ-ի կենսաբանական ֆակուլտետը, աշխատել է մարդու և կենդանիների ֆիզիոլոգիայի ամբիոնում, այնուհետև զբաղվել երկու հիասքանչ աղջիկների դաստիարակությամբ, որոնցից Անժելիկան, կարմիր դիպլոմով ավարտելով ԵՊՀ ռոմանագերմանական ֆակուլտետի անգլիական բաժինը, աշխատում է Երևանի Ամերիկյան համալսարանում, իսկ Վարդուհին նույնպես կարմիր դիպլոմով ավարտելով նույն ֆակուլտետը, դասավանդում է ԱՅԲ դպրոցում:

Մյուս թոռը՝ Արմեն Միքայելի Նադիրյանը, ոսկե մեդալով ավարտել է Երևանի հմ. 171 միջնակարգ դպրոցը, որից հետո կարմիր դիպլոմով ավարտել է ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետը: Երկար տարիներ նա աշխատել է ՀՀ դատախազության համակարգում՝ զբաղեցնելով շրջանային դատախազության քննիչից մինչև ՀՀգլխավոր դատախազին առընթեր հատկապես կարևոր գործերի քննիչի պաշտոնները: Այնուհետև աշխատել է նորաստեղծ ՀՀ հատուկ քննչական ծառայությունում, սկզբում՝ որպես հատկապես կարևոր գործերի ավագ քննիչ, ապա պետի տեղակալ: Անբասիր և գերազանց ծառայության համար բազմիցս պարգևատրվել է, այդ թվում՝ «Մխիթար Գոշ» մեդալով:

Վերջինիս կինը՝ Սիդա Մերուժանի Նադիրյանը, ավարտել է ԵՊՀ ռուսական բանասիրական ֆակուլտետը և դասավանդում է Երևանի հմ. 170 ավագ դպրոցում:

Դուստրերից՝ Աստղիկ Արմենի Նադիրյանը կարմիր դիպլոմով ավարտել է ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի քաղաքագիտության բաժինը և աշխատում է արտաքին գործերի նախարարության դիվանագիտական դպրոցում:

Անի Արմենի Նադիրյանը կարմիր դիպլոմով ավարտել է Հայաստանի տնտեսագիտական համալսարանի ֆինանսական ֆակուլտետի բակալավրիատը և ուսումը շարունակում է մագիստրատուրայում:

Որդին՝ Միքայել Արմենի Նադիրյանը, սովորում է ավագ դպրոցի 10-րդ դասարանում և արդյոք նա կպահպանի ընտանիքի ավանդույթը, ցույց կտա ապագան…

Մանկավարժի մասնագիտությունը շարունակական ու սիրելի է դարձել Նադիրյանների ընտանիքի անդամների համար, դպրոցը գերազանցությամբ ու ոսկե մեդալով, իսկ համալսարանը՝ կարմիր դիպլոմով ավարտելը՝ ընտանեկան ավանդույթի մի մասը… Նրանք հայ դպրոցի ու կրթական ավանդույթների լավագույն հենարանն են ու շարունակողները, մանկավարժության նվիրյալներ…Հենց այդպիսի նվիրյալների շնորհիվ է մանկավարժության ոլորտը ամրագրում իր առաջընթացն ու ապագան:

Համերգ՝ նվիրված մայիսյան հաղթանակներին

Մանկավարժական համալսարանի երաժշտության ամբիոնը կազմակերպել էր «Մենք հզոր ենք մեր լեռների պես» խորագրով համերգ, որը նվիրված էր հայ ժողովրդի մայիսյան հաղթանակներին: Ելույթ ունեցան ամբիոնի Ազգային նվագարանների նվագախումբը, ղեկավար՝ ՀՀ վաստակավոր արտիստ Նորայր Դավթյան, Ջազ բենդը, ղեկավար՝ Մշակույթի վաստակավոր գործիչ, պրոֆեսոր Երվանդ Երզնկյան, Փողային նվագախումբը՝ ղեկավար, դոցենտ Կոլյա Մարտիրոսյան, ինչպես նաև քանոնահարների, դուդուկահարների, դհոլահարների խմբերը:

Ուսանողները կատարեցին հայ և արտասահմանյան կոմպոզիտորների հանրաճանաչ ստեղծագործություններից՝ հիացնելով դահլիճում ներկա ուսանողներին և դասախոսներին, նաև մատուցեցին դաշնամուրային հրաշալի կատարումներ:

Ամբիոնի վարիչ Արա Գևորգյանը նպատակաուղղված աշխատանք է իրականացնում հայկական ազգային գործիքների ու նվագարանների հանրահռչակման ուղղությամբ. «Այն, ինչ չի անում հեռուստատեսությունը, անում ենք մենք. տարվա մեջ 1-2 անգամ այս դահլիճում կազմակերպում ենք նման համերգներ, համերգներով հանդես ենք գալիս նաև մարզերում: Եթե մենք սերունդների մեջ սեր չարթնացնենք ազգային նվագարանների ու երգ-երաժշտության հանդեպ, տարիների հետ այն կմեռնի»:

Ճանաչված երաժիշտ կատարողի՝ Արա Գևորգյանի նախաձեռնությամբ ֆակուլտետի նվագախմբերն անվճար համերգներ են կազմակերպում մարզերում: Հայաստանում և Հայաստանից դուրս տարբեր փառատոներում մրցանակային տեղերի արժանացած համալսարանական նվագախմբերը իրենց կատարումներով հիացնում են մարզերի ավագ դպրոցների աշակերտներին և երաժշտական դպրոցների սաներին, նրանց համակրանքին արժանացնելով ազգային գործիքներն ու երաժշտությունը:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

Մեղրաձորի աշակերտները՝ Մանկավարժականում

Մայիսի 5-ին համալսարանի պատմության և հասարակագիտության ֆակուլտետը հյուրընկալեց Կոտայքի մարզի Մեղրաձոր գյուղի Հ. Հակոբյանի անվան միջնակարգ դպրոցի աշակերտներին: Հայոց պատմության ամբիոնի դասախոսներ, պատմ. գիտ. թեկնածուներ Մարիամ Եղյանը և Սուսաննա Խաչատրյանը նախ երեխաներին ուղեկցեցին թանգարան, որտեղ նրանք ծանոթացան բուհի պատմությանը և ձեռքբերումներին: Այնուհետև դասախոսները երեխաներին պատմեցին մեր

բուհում ուսանողների ակտիվ առօրյայի, միջազգային ծրագրերի, ամառային դպրոցների և այլ հնարավորությունների մասին:

Վերջում երեխաներին ցուցադրվեց հայոց պատմության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Աշոտ Փիլիպոսյանի ղեկավարությամբ նկարահանված «Գլաձոր» վավերագրական ֆիլմը, որը պատմում է բոլոր ժամանակներում ուսման նկատմամբ մեր ժողովրդի վերաբերմունքի մասին:

ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԱՄՓՈՓԻՉ ԿՈՆՖԵՐԱՆՍ

Մասնագիտական կրթության և կիրառական մանկավարժության ամբիոնը կազմակերպել էր 2016-2017 ուսումնական տարվա II կիսամյակի մանկավարժական պրակտիկայի ամփոփիչ կոնֆերանս, որի ընթացքում ներկայացվեցին Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի սոցիալական մանկավարժություն բաժնի 2-րդ կուրսի ուսումնաճանաչողական (շարունակական) և 3-րդ կուրսի կիրառական (ակտիվ) պրակտիկաների շրջանակներում իրականացված աշխատանքները:

Ուսումնաճանաչողական (շարունակական) պրակտիկան իրականացվել էր Երևանի Գագիկ Ստեփանյանի անվան № 135 և Երևանի Գայի անվան № 129 հիմնական դպրոցներում, կիրառական պրակտիկան՝ ՀՕՖ-ի երեխաների աջակցության, Աջափնյակ վարչական շրջանի երեխաների սոցիալական հոգածության և «Զատիկ» երեխաների աջակցության կենտրոններում:

Կոնֆերանսի նպատակն էր ամփոփ ներկայացնել մանկավարժական պրակտիկաների ընթացքում կատարված աշխատանքները, նշել ձեռքբերումներն ու դժվարությունները: Այն բաղկացած էր երկու մասից: Ուսանողները կազմակերպել էին պրակտիկայի ընթացքում կատարած աշխատանքների, պաստառների ու նկարների ցուցահանդես, այնուհետև յուրաքանչյուր խումբ հակիրճ անդրադարձավ իր կատարած աշխատանքներին, պատասխանեց տրված հարցերին, հիմնավորեց առաջարկությունները:

2-րդ կուրսի ուսանողները նշեցին, որ թեև պրակտիկան ուսումնաճանաչողական էր, բայց իրենք ակտիվություն են դրսևորել, փորձել են բուհում անցած տեսական նյութը գործնականում կիրառել և համալրել գիտելիքները: Նշեցին, որ իրենց մուտքը դպրոց որպես սոցիալական մանկավարժներ հաջողված էր, քանի որ գործնականում տեսել են իրենց գործառույթների իրականացումն ու լիարժեք գիտակցել իրենց մասնագիտության կարևորությունն ու արդիականությունը: Իսկ 3-րդ կուրսի ուսանողները նշեցին, որ կիրառական պրակտիկայի ընթացքում կարողացել են տեսական գիտելիքները պրակտիկայում կիրառել, անցկացրել են ինչպես խմբային, այնպես էլ անհատական սոցիալ-մանկավարժական աշխատանքներ, թեմատիկ սեմինարներ ու քննարկումներ, դաստիարակչական նշանակություն ունեցող տեսանյութերի դիտումներ, տարբեր միջոցառումներ, ներդրում են ունեցել նաև կենտրոնների սաների ազատ ժամանցի կազմակերպման գործում և այլն: Իրականացված աշխատանքներն ուղղված են եղել սոցիալ-մանկավարժական մի շարք խնդիրների լուծմանը՝ արժեհամակարգի ձևավորում, մասնագիտական կողմնորոշում, ինտելեկտի բարձրացում, միջանձնային հարաբերությունների կարգավորում, հետագա կյանքի համար նպատակների ձևավորում, բնավորության լավ գծերի զարգացում և այլն. դրանք նպաստել են կենտրոնների սաների սոցիալականացմանը:

Կոնֆերանսի ընթացքում ելույթ ունեցավ Մասնագիտական կրթության և կիրառական մանկավարժության ամբիոնի վարիչ Ա. Թոփուզյանը, ով կարևորեց յուրաքանչյուր ուսանողի համար պրակտիկայի դերն ու նշանակությունը՝ շեշտելով, որ աշխատանքներն ամփոփելիս հատուկ ուշադրություն պետք է դարձնել կատարածի բովանդակության վրա. «Ձեզ հարց տվեք՝ «ինչ եմ տարել և ինչով եմ վերադարձել»:

Ելույթ ունեցավ նաև բուհի պրակտիկայի վարչության պետ Վ. Սարգսյանը, ով արժևորեց կատարված աշխատանքը:

Ամփոփիչ կոնֆերանսի ավարտին հնչեցին շնորհակալական խոսքեր՝ ուղղված պրակտիկայի ընթացքում ուսանողների հետ աշխատած բուհի պրոֆեսորադասախոսական անձնակազմին և պրակտիկայի հաստատությունների մանկավարժական կոլեկտիվներին՝ պրակտիկայի ողջ ընթացքում ուսանողների հետ աշխատելու, ուղղորդելու և աջակցելու համար:

Կոնֆերանսի վերջում դասախոսներին և հյուրերին տրամադրվեցին կպչուն թղթեր, որոնց միջոցով պետք է գնահատվեին ուսանողների կատարած աշխատանքները՝ դրանք փակցնելով առավել շատ հավանության արժանացած պաստառներին:

Առավելապես հավանության արժանացան խմբային աշխատանքների արդյունքում ստեղծված պաստառները, որտեղ արտացոլված էին երեխաների աշխատանքները, նրանց կարծիքներն ու տեսակետները: Մասնավորապես առանձնացան 3-րդ կուրսի ուսանողների կողմից ստեղծված «Բնավորության լավ և վատ գծեր», «Երազանքների ծառ», «Մենք ընկերասեր ենք», «Մասնագիտությունների աշխարհում», «Արևը ծագում է այնտեղ, որտեղ սպասում են», «Քառօրյա հերոսամարտ» վերնագրերով պաստառները, ինչպես նաև երեխաների ձեռքի աշխատանքները՝ նկարներ ու տիկնիկներ: 2-րդ կուրսի ուսանողների ստեղծած պաստառների մեջ աչքի ընկան թեմատիկ սեմինարների արդյունքներն արտացոլող՝ «Ընկեր և ընկերություն», «Մեր բնությունը մաքուր պահենք», «Ինչպես վարվել աղբի հետ» և «Առողջ ապրելակերպ» խորագրերը կրող պաստառները:

Գայանե ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Մասնագիտական կրթության և կիրառական մանկավարժության ամբիոնի դասախոս, մանկավարժական գիտությունների թեկնածու

ՄԵՆՔ ՁԵՐ ԿՈՂՔԻՆ ԵՆՔ

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ մասնագիտական կրթության և կիրառական մանկավարժության ամբիոնի դասախոսները, ամբիոնի ենթաշեֆ՝ Երևանի Ներսես Մեծի անվան № 124 հիմնական դպրոցի աշակերտները, ՀՊՄՀ Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի սոցիալական մանկավարժության բաժնի III կուրսի ուսանողները մայիսի 24-ին այցելեցին Նորքի ծերանոց (տուն-ինտերնատ):

«Մենք Ձեր կողքին ենք» խորագիրը կրող միջոցառման ընթացքում աշակերտները և ուսանողներն իրենց գեղեցիկ ասմունքով, երգ ու պարով հուզեցին բոլորին՝ տուն-ինտերնատի բնակիչներին, հյուրերին: Մեծ էր բոլորի հուզմունքն ու ոգևորությունը, սերունդների միջև անջրպետը վերացել էր՝ տեղի տալով անկեղծ բարեկամության ու հոգատարության առինքնող դրսևորումների:

Միջոցառման վերջում մանկավարժական գիտությունների թեկնածու Նաիրա Մարտիրոսյանը ամբիոնի բոլոր դասախոսների և ուսանողների անունից ծերանոցի բնակիչներին մաղթեց երկարակեցություն, համբերություն, կարևորեց ապագա սոցիալական մանկավարժների ու աշակերտների շփումը տատիկ-պապիկների հետ՝ խոստանալով, որ նման միջոցառումները շարունակական կլինեն: Ծերանոցի բնակիչները և աշխատակազմի ներկայացուցիչները շնորհակալություն հայտնեցին հոգատար վերաբերմունքի և հոգածության համար: Նրանք հեռացան դահլիճից՝ իրենց հետ տանելով սպասումը հաջորդ գեղեցիկ միջոցառումների:

Կարինե ՊԱՊԻԿՅԱՆ
Մասնագիտական կրթության և կիրառական մանկավարժության ամբիոնի դոցենտ

ՈՒՍԱՆՈՂԻ ՕՐԱԳՐԻՑ

ԵՐԱԶԱՆՔԸ

1997 թվականն էր, երբ ավարտեց Մարտունու միջնակարգ դպրոցը…Երազում էր ուսումը Երևանում շարունակելու մասին, սակայն գիտեր՝ ծնողներն ի վիճակի չէին իրեն Երևան ուղարկել, ուստի ոչինչ չասաց, ոչինչ չպահանջեց… Մարտունու «Գեղարքունիք» համալսարանն իր դռները բացեց նրա առջև. ընդունվեց բուհի բանասիրական ֆակուլտետ և շարունակեց գերազանց սովորել…Սակայն սրտում մի անմար կրակ կար. սովորել Երևանի պետական մանկավարժական համալսարանում, ուսանել մեծանուն դասախոսների մոտ, որոնց մասին միայն լսել էր և կարդացել նրանց հեղինակած գրքերը:

Մի օր էլ նրա դասախոսներից մեկը, որի աղջիկը սովորում էր ԵՊՀ-ում, ասաց. «Արի Աստղիկին ասեմ (նրա աղջկա անունն էր) քեզ տանի համալսարան, ծանոթացնի Գևորգ Ջահուկյանի և մյուս դասախոսների հետ»: Ամոթից ու հուզմունքից կարմրեց. ինչպե՞ս ասել, որ տրանսպորտի գումար չունի համալսարան հասնելու և տուն վերադառնալու համար: Ու անհեթեթ պատճառաբանելով՝ մերժեց: Երբեմն-երբեմն Մանկավարժական համալսարանից դասախոսներ էին գալիս «Գեղարքունիք» դասախոսելու: Այդ օրերն իսկական տոն էին նրա համար, հնարավորություն՝ տեսնելու և լսելու գիտությունների դոկտոր, պրոֆեսորների… Ցույց չէր տալիս, բայց ամեն անգամ, երբ նրանք վերջացնում էին դասընթացները, իր սիրտն էլ նրանց հետ էր գնում: Ավարտեց համալսարանը՝ ուսման ծարավը սրտում. «Երանի ամբողջ կյանքում ուսանող մնամ, երանի չվերջանան իմ ուսանողական տարիները….»:

Տասներեք տարի անցավ, տասներեք երկար ու ձիգ տարիներ՝ ակնթարթի նման…Ուսման չհագեցած ծարավը նրան վերջապես Երևան բերեց, ընդունվեց ՀՊՄՀ մագիստրատուրան… Իրականացավ բաղձալի երազանքը, նվաճեց չնվաճված բարձունքը… Լինելով արդեն երեք երեխաների մայր՝ շարունակեց խորացնել գիտելիքները մեծագույն սիրով ու նվիրումով: Նրա սովորելու փափագը, ավելին իմանալու հագուրդը օրինակ դարձավ նաև ինձ համար, ու ես ևս դարձա ուսանող…Ամեն անգամ երիտասարդ ուսանողների հանդիպելիս հորդորում է՝ լավ սովորեք, արժանի եղեք ձեր կոչմանը, չէ՞ որ այսպիսի հիանալի հնարավորություն ունեք, որի մասին շատերը երազել են միայն…Ու մտքով նորից գնում էր հետ. իսկ իրենց դասարանում վեց մեդալակիրներ կային, վեցն էլ չմեկնեցին Երևան…

Եթեր ԱՎԵՏԻՍՅԱՆ
Բանասիրական ֆակուլտետ, մագիստրատուրա (հեռակա), 2-րդ կուրս

Հնչեց վերջին զանգը

Դպրոցական տարիների ավարտն ազդարարող վերջին զանգի ղողանջներն արդեն 23-րդ անգամ հնչեցին ՀՊՄՀ Հենակետային վարժարանում: Ջերմությամբ, հպարտությամբ, ժպիտներով ու հուզմունքով շրջանավարտներն անմոռանալի օր պարգևեցին իրենց ու ներկաներին:

Ավարտական հումանիտար (հոգեբանություն, լրագրություն), մշակութային (նկարչություն, բնագիտամաթեմատիկական) հոսքերում սովորող 112 շրջանավարտներ հանդիսավոր տոնական միջոցառմամբ ազդարարեցին կյանքի նոր փուլի մեկնարկն ու հարազատ կրթօջախի հրաժեշտը:

Քաջ գիտակցելով կյանքի նոր փուլի հետաքրքիր, բարդ ու պատասխանատու շրջանը՝ շրջանավարտներն, իհարկե, ուրախ էին ու հուզված, որ ավարտում են կյանքի դպրոցական փուլը, բայց միևնույն ժամանակ տխուր էին, որ հրաժեշտ են տալիս տարիների ընթացքում արդեն հարազատ ու սիրելի դարձած դպրոցին և ուսուցիչներին:

Շրջանավարտները ևս մեկ անգամ բարձրաձայնեցին՝ հնարավորություն ունենային կրկին ընտրել ուսումնական հաստատություն, ապա միանշանակ կընտրեին կլիներ ՀՊՄՀ Հենակետային վարժարանը, «քանզի միայն այս վարժարանում է հնարավոր միաժամանակ ստանալ և՛ գիտելիքներ, և՛ հոգատարություն, և՛ հայրենիքը սիրելու ու գնահատելու ունակություն»: «Վարժարանի հետ մեծացանք, դարձանք խելացի, հասուն ու ձեռք բերեցինք բազմապիսի գիտելիքներ: Մենք գնում ենք հպարտ, վստահ քայլերով և զինված գիտելիքներով՝ մուտք գործելու համար կյանքի նոր փուլ, իսկ այդ ամենը մեզ տվել է մեր հարազատ կրթօջախը»,- ասացին շրջանավարտները:

Շնորհակալություն հայտնելով ուսուցիչներին՝ շրջանավարտները նկատեցին, որ նրանց տված գիտելիքները, հմտությունները, մարդու համար կարևոր հատկանիշները կյանքի յուրաքանչյուր պահին օգնության են գալու իրենց:

Հանդիսության ավարտին վարժարանի տնօրեն Նաիրա Սաֆարյանը շրջանավարտներին փոխանցեց Երևանի քաղաքապետ Տարոն Մարգարյանի շնորհավորական ուղերձը: Այնուհետև հպարտությամբ, սիրով ու ջերմությամբ ողջունեց բոլոր շրջանավարտներին: «Մեր շրջանավարտներն իրենց հաղթանակներով, հաջողություններով հարստացրել են վարժարանի պատմության էջերը և վստահ եմ, որ դեռ շարունակելու են հարստացնել: Ինչ էլ դառնաք, ուր էլ լինեք սիրով, ջերմությամբ ու հոգատարությամբ կատարեք ձեր առաքելությունը»,- ասաց Նաիրա Սաֆարյանը:

«Վերջին դասը» կայացավ նաև ՀՊՄՀ № 57 հիմնական դպրոցում. 9-րդ դասարանի համար հնչեց վերջին զանգը, այն ազդարարեց մի գեղեցիկ պատմության ավարտ և ավետեց վառ ու լուսավոր ապագայի սկիզբ:

Միջոցառմանն աշակերտները ջերմ ու անկեղծ խոսքերով իրենց երախտիքի խոսքը հղեցին իրենց կրթող մանկավարժներին: Գեղեցիկ բանաստեղծություններով, երաժշտական կատարումներով ու հումորով աշակերտները ժպիտներ ու ջերմություն պարգևեցին ներկաներին:

Միջոցառման ավարտին դպրոցի տնօրեն Նաիրա Տողանյանն աշակերտներին մաղթելով մեծ հաջողություններ և նորանոր ձեռքբերումներ՝ ընդգծեց. «Յուրաքանչյուր գնացող դասարան թողնում է իր յուրահատուկ հետքը: Մենք նվիրում, ջերմություն ենք ներդրել, փորձել ենք մարդ դաստիարակել, իսկ առջևում ձեզ է սպասում ավագ դպրոցը»:

Սոնա ԱՐԱՄՅԱՆ

Երեխաների օրը և օրիգամիի խորհուրդը

1950 թվականից աշխարհը հունիսի 1-ին նշում է Երեխաների պաշտպանության միջազգային օրը: Այս առիթով Մանկավարժական համալսարանի թանգարանը, Պատմության և իրավագիտության ֆակուլտետը Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայության և հայ-ճապոնական «Հիկարի» կենտրոնի հետ համատեղ կազմակերպվել էին օրիգամիի պատրաստման վարպետության դաս:

Միջոցառմանը մասնակցում էր Հայաստանի Հանրապետությունում ճապոնիայի առաջին փոխդեսպան Սասամե Կենիչիրոն, ով շնորհավորեց երեխաներին, իր գոհունակությունը հայտնեց կազմակերպված հիանալի միջոցառման առթիվ և կարևորեց երկրների միջև կրթական և մշակութային կապերի ամրապնդումը:

Ելույթ ունեցան ՀՊՄՀ պրոռեկտոր, պրոֆեսոր Սրբուհի Գևորգյանը, Հայոց պատմության ամբիոնի վարիչ պրոֆեսոր Աշոտ Փիլիպոսյանը, «Հիկարի» կենտրոնի տնօրեն Կարինե Փիլիպոսյանը. նրանք բացահայտեցին օրվա և օրիգամիի արվեստի խորհուրդը՝ ներկայացնելով ճապոնական արվեստը բնութագրող կարևոր փաստեր և իրողություններ:

Միջոցառմանը մասնակցող երեխաները ծանոթացան ճապոնական հայտնի արվեստի պատմությանը և գործնական հմտություններ ձեռք բերեցին՝ գունավոր քառակուսի թղթերը ծալելու միջոցով վերածելով պատկերների:

Երեխաների պաշտպանության միջազգային օրվա առթիվ գեղարվեստական կատարումներով ոգունելու էին եկել №64, №106 և Մանկավարժական համալսարանի №57 հիմնական դպրոցների երեխաները:

ՑՈՒՑԱԴՐՈՒԹՅՈՒՆ...

Դասախոսները ուսանողներին ընձեռված նման հնարավորությունը շատ կարևորեցին, քանզի որպես դիզայներներ, նրանց համար այս ցուցադրությունն առաջին կարևոր և լուրջ փորձն էր: Ուսանողներն ի սկզբանե մասնակից են եղել բոլոր կազմակերպչական աշխատանքներին՝ մոդելների ընտրությունից մինչև երաժշտության ընտրություն:

«Սա նրանց համար լավ պրակտիկա է, տեղում ծանոթացան դիզայներական հետնաբեմին: Բոլոր դիզնայներին վերջում սա է սպասվում՝ ցուցադրություն պոդիումում: Աշխատաքները շատ տարբեր են. կան և՛ լավերը, և՛ ոչ այնքան: Կարևորում եմ դիզայներների համար մասնագիտական կրթությունը, քանզի ինձ համար կրթությունը կյանքի հիմքն է, որի միջոցով էլ նաև դառնում են լավ մասնագետ»,- ասաց Արամ Նիկոլյանը: Դիզայները հավելեց, որ ուսանողների մեջ տեսնում է շատերին, ովքեր դեռևս իրենց ասելիքը կներկայացնեն դիզայներական պրոֆեսիոնալ դաշտում:

Լիլիթ Մելիքյանը նկատեց, որ նման ձևաչափով առաջին անգամ է իրականացվում ցուցադրություն: «Ներկայացված թեմաները մտածված էին և հետաքրքիր: Այս ցուցադրության շնորհիվ ուսանողները սովորեցին նաև, թե ինչպես է պետք կազմակերպել ցուցադրություններ. մենք առավել փորձել ենք չմիջամտել և թույլ տալ, որ նրանք արտահայտեն իրենց ուրույն մտածելակերպը»,- ասաց Լիլիթ Մելիքյանը և հավելեց, որ բուհն այս մասնագիտությանը մեծ ուշադրություն է դարձնում. ուսումնառության ընթացքում նրանք հնարավորություն են ստանում պրոֆեսիոնալ կարել, ձևել և ներկայացնել իրենց աշխատանքները: Մասնագետը ներկայացված աշխատանքների մեջ առանձնացրեց հատկապես ասեղնագործ աշխատանքները. «Ներկայացված գրաֆիկական պատկերները ստեղծել են հենց ուսանողները, ոչ թե վերցրել որևէ գրքից, այլ ուսումնասիրել են տարբեր հեղինակների և ստեղծել են իրենցը»:

Ավարտական քննությունների հանձնաժողովի նախագահ, Գեղարվեստի ակադեմիայի պրոֆեսոր, դիզայներ Արթուր Արմենյանն ամփոփելով ցուցադրությունը՝ այն դրական գնահատեց. «Պրոֆեսիոնալ մակարդակը նկատելի էր, հաշվի առնելով, որ սա նրանց առաջին քայլն է դեպի իսկական արվեստ: Մանկավարժական համալսարանը սրանով համարձակ քայլ կատարեց, մասնագիտության հանդեպ լուրջ մոտեցում և վերաբերմունք է նկատվում»:

Վերջում ուսանողներին սպասվում էր անակնկալ, նրանց հետ նույն հարթակում ցուցադրվեցին նաև դիզայներներ Արամ Նիկոլյանի և Լիլիթ Մելիքյանի հավաքածուներից մի քանիսը:



Սոնա ԱՐԱՄՅԱՆ

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ 2017-2018 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՄԲ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՏԵՂԵՐԸ ԵՎ ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐԸ՝ ԸՍՏ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Դասիչ	Մասնագիտություն	Պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար)				Վճարովի	Ուսման վարձ (հազար դրամ)
		ընդամենը	առանց տարկետման իրավունքի		տարկետման իրավունքով		
			ընդամենը	այդ թվում՝ ԲՁ			
		144	118	15	26	1241	
011401.00.7	**Մասնագիտական մանկավարժություն**	**66**	**53**	**9**	**13**	**588**	
011401.19.7	Հայոց լեզու և գրականություն	7	7	0	0	33	250
011401.05.7	Մաթեմատիկա	4	3	1	1	36	230
011401.04.7	Ֆիզիկա	3	2	0	1	17	230
011401.06.7	Ինֆորմատիկա	5	3	2	2	30	260
011401.07.7	Բնագիտություն	1	1	0	0	19	230
011401.12.7	Տեխնոլոգիա և ձեռնարկչություն	4	3	1	1	36	260
011401.02.7	Քիմիա	1	1	0	0	15	230
011401.03.7	Աշխարհագրություն	4	3	1	1	24	230
011401.01.7	Կենսաբանություն	3	3	0	0	28	230
011401.18.7	Պատմություն	8	5	2	3	64	330
011401.08.7	Հասարակագիտություն	3	1	1	2	47	400
011401.24.7	Իրավագիտություն	2	2	1	0	19	490
011401.13.7	Երաժշտական կրթություն	2	2	0	0	27	310
011401.11.7	Կերպարվեստ	3	3	0	0	44	310
011401.14.7	Պարարվեստ	3	1	0	2	27	430
011401.21.7	Անգլերեն լեզու և գրականություն	8	8	0	0	79	420
011401.22.7	Գերմաներեն լեզու և գրականություն	1	1	0	0	8	410
011401.23.7	Ֆրանսերեն լեզու և գրականություն	1	1	0	0	8	410
011401.20.7	Ռուսաց լեզու և գրականություն	3	3	0	0	27	250
031501.00.7	**Մշակութաբանություն**	**5**	**3**	**0**	**2**	**61**	
031501.01.7	Մշակութաբանություն	2	2	0	0	38	300
031501.02.7	Թանգարանային գործ և պամամշակութային կառույցների պահպանություն	3	1	0	2	23	230
021401.00.7	**Կիրառական արվեստ**	**2**	**2**	**0**	**0**	**20**	
021401.01.7	Դեկորատիվ կիրառական արվեստ	2	2	0	0	20	310
021801.00.7	**Արվեստի տեսություն և պատմություն**	**2**	**2**	**0**	**0**	**18**	
021801.01.7	Արվեստի տեսություն, պատմություն և կառավարում	2	2	0	0	18	290
092301.00.7	**Սոցիալական աշխատանք**	**2**	**2**	**1**	**0**	**12**	
092301.01.7	Սոցիալական աշխատանք	2	2	1	0	12	320
031301.00.7	**Հոգեբանություն**	**20**	**19**	**4**	**1**	**132**	
031301.01.7	Հոգեբանություն	1	1	0	0	7	340
031301.04.7	Զինվորական հոգեբանություն	4	3	2	1	18	330
031301.06.7	Կլինիկական հոգեբանություն և հոգեթերապիա	1	1	0	0	8	340
031301.07.7	Անձի հոգեբանություն և հոգեբանական խորհրդատվություն	0	0	0	0	8	340
031301.08.7	Սոցիալական և քաղաքական հոգեբանություն	2	2	1	0	8	340
031301.10.7	Գործնական հոգեբանություն	1	1	0	0	8	340
031301.11.7	Իրավաբանական հոգեբանություն	1	1	1	0	8	340
031301.12.7	Ընտանիքի հոգեբանություն	1	1	0	0	8	340
031301.02.7	Մանկավարժական հոգեբանություն	6	6	0	0	20	300
031301.03.7	Հատուկ հոգեբանություն	3	3	0	0	24	280
031301.13.7	Էրգոթերապիա	0	0	0	0	15	280
011301.00.7	**Ընդհանուր մանկավարժություն**	**9**	**9**	**0**	**0**	**62**	
011301.03.7	Սոցիալական մանկավարժություն	3	3	0	0	22	320
011301.01.7	Տարրական մանկավարժություն և մեթոդիկա	6	6	0	0	40	420
031401.00.7	**Սոցիոլոգիա**	**2**	**2**	**1**	**0**	**17**	
031401.01.7	Սոցիոլոգիա	2	2	1	0	17	320
032101.00.7	**Լրագրություն**	**3**	**2**	**0**	**1**	**20**	
032101.01.7	Լրագրություն	3	2	0	1	20	290
021503.00.7	**Թատերական արվեստ**	**5**	**2**	**0**	**3**	**35**	
021503.02.7	Ռեժիսուրա	5	2	0	3	35	340
032201.00.7	**Գրադարանային-տեղեկատվական աղբյուրներ**	**3**	**2**	**0**	**1**	**17**	
032201.01.7	Գրադարանային-տեղեկատվական աղբյուրներ	3	2	0	1	17	230
021101.00.7	**Տեսալսողական արվեստ**	**6**	**2**	**0**	**4**	**44**	
021101.01.7	Գեղարվեստական լուսանկարչություն	3	1	0	2	22	320
021101.02.7	Օպերատորություն	3	1	0	2	22	320
041301.00.7	**Կառավարում**	**2**	**1**	**0**	**1**	**27**	
041301.06.7	Պրոդյուսերական գործ	2	1	0	1	27	310
011201.00.7	**Նախադպրոցական մանկավարժություն**	**5**	**5**	**0**	**0**	**25**	
011201.01.7	Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա	5	5	0	0	25	300
011302.00.7	**Հատուկ մանկավարժություն**	**8**	**8**	**0**	**0**	**93**	
011302.02.7	Տիֆլոմանկավարժություն	2	2	0	0	10	270
011302.01.7	Սուրդոմանկավարժություն	2	2	0	0	10	270
011302.03.7	Օլիգոֆրենոմանկավարժություն	1	1	0	0	10	270
011302.04.7	Լոգոպեդիա	3	3	0	0	24	280
011302.06.7	Արտ-թերապիա	0	0	0	0	15	280
011302.05.7	Հատուկ մանկավարժություն	0	0	0	0	24	280
023102.00.7	**Օտար լեզու և գրականություն**	**1**	**1**	**0**	**0**	**15**	
023102.05.7	Իսպաներեն լեզու և գրականություն	1	1	0	0	15	410
011101.00.7	**Կրթական գիտություններ**	**0**	**0**	**0**	**0**	**15**	
011102.05.7	Կրթության կառավարում	0	0	0	0	15	350
052101.00.7	**Շրջակա միջավայրի գիտություններ**	**2**	**2**	**0**	**0**	**16**	
052101.01.7	Շրջակա միջավայրի գիտություններ	2	2	0	0	16	230
054201.00.7	**Աշխարհագրություն**	**1**	**1**	**0**	**0**	**24**	
054201.06.7	Լանդշաֆտային պլանավորում	1	1	0	0	24	250

Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է

2017-2018 ՈՒՍՏԱՐՎԱ ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

Դիմումներն ընդունվում են

Առկա՝ անվճար հիմունքներով

1-ին փուլ՝

մայիսի 20-ից հունիսի 9-ը

Առկա՝ վճարովի հիմունքներով (առանց տարկետման իրավունքի)

2-րդ փուլ՝

հունիսի 10 -ից օգոստոսի 25-ը

Հեռակա ուսուցում՝

հունիսի 10-ից սեպտեմբերի 20-ը:

Դիմորդները ներկայացնում են հետևյալ փաստաթղթերը.

1. Դիմում-հայտ (գրվում է տեղում)
2. Դիպլոմի և դիպլոմի հավելվածի (միջուկի) բնօրինակը և պատճենը
3. Անձնագրի պատճենը
4. Ինքնակենսագրություն
5. 4 լուսանկար (3x4 չափսի)
6. Տպագրված կամ տպագրման ընդունված գիտական աշխատությունների, թեզիսների ցուցակը (դրանց առկայության դեպքում):

ք. Երևան, Խանջյան 5, բարձրահարկ մասնաշենքի 1-ին հարկ, 110 սենյակ, հեռախոս՝ 59-70-69:

Ընդունող հանձնաժողով

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հեռակա ուսուցմամբ սովորող ուսանողների 2016-2017 ուստարվա երկրորդ կիսամյակի ուսման վարձի զեղչի դիմումները համապատասխան փաստաթղթերով ընդունվում են ս.թ հունիսի 8–ից մինչև 30-ը:

Գլխավոր խմբագիր՝
Սիլվա ԱՍՐՅԱՆ
Էջադրումը՝
Պետրոս ՎԱՐԴԱՆՅԱՆԻ
Համարի պատասխանատու՝
Սիլվա ԱՍՐՅԱՆ

Գրանցման վկայական՝ 01Մ00184 տրված է 26.03.2008 թ.
Հասցեն՝ Տիգրան Մեծի 17, հեռ. 59-70-97:
Էլ. փոստ՝ Newspaperaspu.am
Տպագրված է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպագրատանը:
Հասցեն՝ Արշակունյաց 2
Տպաքանակը՝ 1800 օրինակ:
Ծավալը՝ 2 տպ. մամուլ

Թերթի նյութերի արտատպումներն առանց խմբագրության համաձայնության արգելվում է:
Հղումը պարտադիր է: Թերթը տարածվում է անվճար:
Հանձնված է տպագրության 6.06. 2017 թ.
Թերթը կարող եք կարդալ ՀՊՄՀ կայքում՝ www.aspu.am